# Հայտարարություն

Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի /24 դասաժամ/. կերպարվեստի /2 դասաժամ/, երաժշտության /2 դասաժամ/, ինֆորմատիկայի /4 դասաժամ/, մաթեմատիկայի /12 դասաժամ/, ԹԳՀԳ /4 դասաժամ/, աշխարհագրության /9 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անց է կացվում՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /ձև 1/
- 1 լուսանկար 3x4չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն /ձև 5/,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիրները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորնամ տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:
- ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ապեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առակա են թերություններ, մասնակիցը կարեղ է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի հունվարի 15-ից մինչև հունվարի 26-ը ներառյալ, ամեն օր ժամը՝ 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. փետրվարի 01-ին ժամը՝ 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Նորավանի միջն. դպրոցում, հասցեն՝ գյուղ Նորավան, փ. Կենտրոնական, շ. 6, տեղեկությունների համար զանգահարել 094-94-25-83 հեռախոսահամարով: